



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16056

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հունվարի 21-ի թիվ 06-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/03-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԱՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի և Կարեն Սարգսյանի կազմով, քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի քննության առնելով փաստաբան Մարատ Կոստանյանին (արտոնագիր՝ թիվ 552) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

Պատասխանողը խորհրդի 21.11.2016թ. թիվ ԿԳ/186-Ա որոշմամբ (**այսուհետ՝ նաև Որոշում**) ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության Պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.13 կետի պահանջների խախտման համար:

Որոշումն ուժի մեջ չի մտել, քանի որ Պատասխանողի կողմից բողոքարկվել է դատական կարգով (քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0224/02/17):

Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի նոր խմբագրությամբ (**այսուհետ՝ նաև նոր Կանոնագիրք**) 2.13 կետի գործողությունը դադարեցվել է:

2. Վերանայման վարույթ հարուցելու մասին խորհրդի որոշումը.

Խորհրդի 20.11.2019թ. թիվ 21/10-Ա որոշմամբ թիվ ԿԳ-16056 կարգապահական գործով նոր երևան եկած հանգամանքի հիմքով սկսվել է վերանայման վարույթ, և Պատասխանողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին խորհրդի 21.11.2016թ. թիվ ԿԳ/186-Ա որոշումը մասնակի՝ 2-րդ և 3-րդ կետերի մասով ճանաչվել է անվավեր:

3. Խորհրդի նիստը և կողմերի մասնակցությունը

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 21.01.2020թ.-ին՝ ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

Թիվ ԿԳ-16056 կարգապահական գործով դիմող Մարինե Ֆարմանյանը և պատասխանող Մարատ Կոստանյանը թեև պատշաճ ծանուցվել էին կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չեն ներկայացել:

4. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մարատ Կոստանյանի նկատմամբ Կանոնագրքի 2.13 կետի պահանջների խախտման հիմքով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ նաև՝ **Կարգ**) 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ **բացակայում է կարգապահական խախտման դեպքը**.

Կանոնագրքի 2.13. կետի համաձայն՝

2.13.1 փաստաբանը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա իր կամ իր մերձավոր ազգականի գործը վարել, եթե գործի զգացմունքային բնույթը կարող է խանգարել պարզաճ իրավական օգնություն ցույց տալուն:

2.13.2 սույն կետի պահանջի խախտումը պատասխանատվություն է առաջացնում, եթե իր կամ իր մերձավոր ազգականի գործը վարող փաստաբանը թույլ է տալիս դատավարության մյուս մասնակիցների կամ փաստաբանների նկատմամբ բռնի կամ վիրավորական գործողություններ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ. թիվ 1/-Լ որոշմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը հաստատվել է նոր խմբագրությամբ, որի համաձայն՝ Կանոնագրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերը հանվել են, հետևաբար դրանցով սահմանված արարքները դադարել են լինել կարգապահական իրավախախտում:

Կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

Նոր Կանոնագրքի 10.2 կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը պարտավոր է ապահովել Կանոնագրքի միատեսակ կիրառումը:

Նոր խմբագրությամբ Կանոնագրքի 10.4 կետից հետևում է, որ այն բոլոր դեպքերում, երբ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել

է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքով նախատեսված որևէ արարքի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագրքով այդ արարքը խախտում չի համարվում, փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը պետք է լուծվի նոր խմբագրությամբ Կանոնագրքին համապատասխան: Այսինքն՝ փաստաբանը չպետք է ենթարկվի կարգապահական պատասխանատվության, և, համապատասխանաբար, փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճվի:

Սույն պարագայում Պատասխանողի կողմից դրևորվել է վարքագիծ, որը համապատասխանում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի 2.13.1 և 2.13.2 ենթակետերին, որոնք նոր խմբագրությամբ Կանոնագրքով հանվել են, հետևաբար Պատասխանողին վերագրվող և այդ ենթակետերով նախատեսված արարքները դադարել են լինել կարգապահական իրավախախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Նոր խմբագրությամբ Կանոնագրքի 10.4 կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մարաթ Կոստանյանի (արտոնագիր թիվ 552) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.13 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16056 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Մարաթ Կոստանյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Սիմոն Բարայան

21 հունվարի, 2020թ.
թիվ ԿԳ/03-Ա
ք. Երևան